

ОБОРОНА И БЕЗОПАСНОСТЬ


Տանկային ստորաբաժանումների կիրառման խնդիրները ժամանակակից համագորային մարտում

Հաշարայան Մնացական Գ.

կառավարման մագիստրոս, փոխգնդապետ,

մարշալ Հ. Բաղրամյանի անվան հրամանատարաշտաբային ինստիտուտի օպերատիվ արվեստի
և մարտավարության ամբիոնի դասախոս,

ՀՀ ՊՆ Վ. Մարգարյանի անվան ռազմական սկադերիա (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0002-0627-2915>

mnachajaty499@gmail.com

ՀՏԳ՝ 355.4; EDN: FYCUUT

DOI: 10.58587/18292437-2026.1-25

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ 44-օրյա պատերազմ, տանկային զրոհ, համագորային մարտ, Ռուս-ուկրաինական պատերազմ, ապագայի պատերազմներ

Проблемы применения танковых подразделений в современных общевойсковых боевых действиях

Аджатян Мнацакан Г.

Магистр менеджмента, подполковник,

Преподаватель кафедры оперативного искусства и тактики

Командно-штабного института имени маршала И. Баграмяна,

Военной академии имени В. Саргсяна МО Республики Армения (Ереван, РА)

Аннотация. Автор статьи рассматривает один из самых проблемных вопросов в современных военных операциях — применение танков.

Представляя историю и развитие танков, он тщательно анализирует проблемы использования танковых подразделений в 44-дневной войне и на Украине.

Так много потерь армянских танков произошло во время войны, когда Азербайджан в первые часы войны атаковал армянские системы ПВО, тем самым добившись превосходства в воздухе.

Между тем, одной из слабостей российских танков на Украине является то, что они требуют защиты пехотой от противотанковых ракет противника, особенно в городских условиях, что позволило украинским силам поражать российские танки противотанковыми группами и добиваться успеха.

Автор утверждает, что в будущем танки будут меньше, легче и мобильнее, будут иметь гибридные или электрические двигатели.

Ключевые слова и словосочетания: 44-дневная война, танковая атака, общевойсковые боевые действия, Российско-украинская война, войны будущего

Problems of Using Tank Units in Modern Combined Arms Combat

Hajatyán Mnatsakan G.

Master of Management, Lieutenant Colonel,

Lecturer, Department of Operational Art and Tactics

Command and Staff Institute named after Marshal H. Baghramyan,

Military Academy named after V. Sargsyan,

Ministry of Defense of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The author of this article examines one of the most problematic issues in modern military operations—the use of tanks.

Presenting the history and development of tanks, he carefully analyzes the problems of using tank units in the 44-Day War and in Ukraine.

So many Armenian tank losses occurred during the war when Azerbaijan attacked Armenian air defense systems in the first hours of the war, thereby achieving air superiority. Meanwhile, one of the weaknesses of Russian tanks in Ukraine is that they require infantry protection from enemy anti-tank missiles, especially in urban areas. This allowed Ukrainian forces to engage Russian tanks with anti-tank groups and achieve success.

The author argues that future tanks will be smaller, lighter, and more mobile, and will have hybrid or electric engines.

Keywords & phrases: 44-Day War, tank attack, combined arms combat, Russian-Ukrainian War, future wars

Մուտք

Ժամանակի ընթացքում կախված մարտի վարման տեսակներից և արդի մարտահրավերներից տանկերը ձևափոխել են իրենց մարտավարատեխնիկական բնութագրերը՝ շարունակելով ունենալ թույլ և ուժեղ կողմեր: Տանկային ստորաբաժանումները, լինելով **ցամաքային զորքերի գլխավոր հարվածային ուժը**, առավելապես կիրառվում են գլխավոր ուղղություններում և նրանց հիմնականում առաջադրվում են ներքոնշյալ մարտական խնդիրները.

ա. հակահարվածների (հակագրոհների) իրականացում,

բ. պաշտպանության կայունության և ակտիվության բարձրացում [1, էջ 19]:

Տանկերի մեջ իսկապես ինչ-որ գրավչություն կա, համեմատած այլ ռազմական տեխնիկաների հետ կարծես թե տանկերը խոստանում են հուսալիություն, հզորություն և պաշտպանություն: Նրանք առաջացնելով բավականին բարձր ադմուլ՝ ինչ-որ տեղ թողնում են նաև հոգեբանական ճնշվածություն հակառակորդի համար: Փաստն այն է, որ նրանք հրապուրելով մեզ հաճախ տալիս են այն արդյունքը, որը չի գոհացնում և արդարացնում մեր սպասելիքները ու կանխատեսումները: Պարզ է, որ ռազմական տեխնիկան մարդու մտքի հնարամտության արդյունք է, որը ավելի շատ զարգացած է Արևմուտքի ռազմարդյունաբերության մեջ: Դրա վառ ասպարույցն այն է, որ վերջին յոթանասունամյակում Միացյալ Նահանգները, ունենալով գիտական և տեխնոլոգիական առաջատար դեր, աշխարհով մեկ հավաքել են ամենաշատ Նոբելյան մրցանակներ:

Միացյալ Նահանգների տնտեսությունն աջակցել ու աջակցում է հսկայական ռազմարդյունաբերական լաբորատորիաներին, համալսարաններին և նոր զինտեխնիկաների ստեղծման մասնավոր կառույցներին, ինչպիսիք են Ajax-ը [6] և General Dynamics-ը, որոնք, փոխգործակցելով միմյանց հետ, պլանավորել են մինչև 2029 թ. ստեղծել այնպիսի զրահամեքենա, որն հագեցած կլինի ժամանակակից համակարգերով, ինչն էլ կապահովի անձնակազմի պատշաճ պաշտպանությունը ներկայիս մարտահրավերներից: Չնայած դրան ամերիկյան բանակն այսօր իսկ ունի հատուկ պաշտպանական համակարգեր՝ ինչպիսիք են. Armoured Shield-ը, Protection Trophy HV-ն և AMAP-ADS-ը [10]:

Այսպիսով գաղափարներն ու տեխնոլոգիաներն կարող են ծառայել որպես անցյալի և սպասվող սպագա պատերազմների նորարարական որոշումներ, դրանց բնութագրերը պետք է համապատասխանեն սպագա պատերազմների կիրառման եղանակներին:

1. Տանկային ստորաբաժանումների ծագումը և զարգացումը:

Առաջին համաշխարհային պատերազմի (ԱՀՊ, 1914-1918 թթ.) ժամանակ տարբեր ռազմաճակատներում կարևորվեց մի հանգամանք, որ ցամաքային ճեղքման համար տանկերը ֆրանսիական ճակատի (Նիվելի) սպրիյան հարձակմանը, Մեսինի (1917 թ. հունիս), Իպրի (1917 թ. հուլիս-նոյեմբեր), Մալմեզոնի (1917 թ. հոկտեմբեր) ու Կամբրեի ռազմագործողություններում (1917 թ. նոյեմբեր-դեկտեմբեր) էական նշանակություն ունեցան [2, էջեր 132-168]:

Վերջինս ռազմարվեստի պատմության մեջ ընդունված է անվանել **«տանկերի տրիումֆ»**, որտեղ ցույց տրվեց, որ հարձակման ժամանակ հրետանու կրակից հետո հետևակի գրոհը չի կարող հաջողության հասնել, եթե չլինեն տանկերի զրահային պաշտպանությունն ու կրակը:

Ուսումնասիրելով առաջին համաշխարհային պատերազմի տարբեր ռազմաճակատները, ինչպիսին է նաև Մոմմայի ռազմագործողությունը (1916 թ. հուլիս-նոյեմբեր) [2, էջ 144], որտեղ սեպտեմբերի 15-ի գրոհի ժամանակ բրիտանական բանակը կիրառեց տանկեր՝ չնայած նրան, որ տանկերի կիրառման շնորհիվ խորացան 2կմ, բայց հաջողությունը տեղային էր և չհանգեցրեց օպերատիվ ճեղքման:

1937 թ. Իսպանիայում քաղաքացիական պատերազմի ժամանակ հստակ դրսևորվեց այն հանգամանքը, որ հանրապետական ուժերի կողմից կիրառված S-26 (T-26) և ՎS (BT) տիպի տանկերը, լինելով թեթև զրահապատված (10-ից 15մմ հաստությամբ թիթեղներով), միևնույն է բացասաբար ազդեցություն ունեցան հետևակի հետ սերտ փոխգործակցելու առումով [5]:

Նույնիսկ մինչ այդ, պարզ էր դարձել, որ տանկերը, որոնք շարժվում էին հետևակի հետ համատեղ՝ չկտրվելով այսպես ասաց շղթայից և դուրս չգալով մարտակարգերից բազմիցս անգամ ենթարկվում էին հակատանկային միջոցների և հակառակորդի զրահատեխնիկայի կոմից ամբողջական խոցմանը:

Նույնիսկ առաջին հայացքից մենք կարող ենք տեսնել, թե որքան բարելավվել է տանկի դիզայնը 1937 թ. համեմատած 1917 թ. հետ, օրինակ համեմատելով **Ամիենի** ճակատամարտում օգտագործված բրիտանական Mark-V տանկը Vickers independent-ի հետ կամ ֆրանսիական Saint-Chamond-ի հետ [3, էջ 173]: Արտաքին կառուցվածքի փոփոխության հետ զուգահեռ բնականաբար զարգանում էր նաև ներքին փոփոխությունները, սպառազինությունը և ընթացային մասը:

Թեթև զրահապատ լինելուց բացի՝ սկսվեց նաև տանկերի հրանոթների զարգացման անհրաժեշտությունը որն էլ բերեց տանկերի նոր սերունդների ստեղծմանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդհանուր առմամբ սահմանվեց, որ բոլոր տանկերը պետք է լավ զինված և պաշտպանված լինեն թշնամու տանկերի դեմ պայքարելու համար: Մրանով վերջապես ավարտվեց տանկերի բաժանումը ոչ հրագենային մասնագիտացված հետևակային և հեծելագորային տանկերի:

Հակառակորդի տանկերի ոչնչացման հիմնական խնդիրը լինելով տանկային ստորաբաժանումների համար կարևորագույն խնդիրներից մեկը, տարիների ընթացքում առաջ բերեց տանկային թնդանոթների աստիճանաբար անը, զինամթերքի նոր տեսակների մշակումը, ավելի մեծ գրահաթափանցման հնարավորությունները, ավելի բարդ կրակի կառավարման համակարգերի ներդրումը՝ տանկային թնդանոթներից թիրախների խոցելու կարողությունը:

Հարկ է նշել, որ հակառակորդի կողմից կիրառված զինատեսակներից պաշտպանվելու համար առաջ եկավ տանկերի գրահապաշտպանությունը, որն թույլ կտար անձնակազմի ապահով պաշտպանությունը մարտի դաշտում, մյուս կողմից ինչպիսիք էին Leopard 1-ը և AMX-30 տիպի տանկերը որոնք ունենալով տվյալ ժամանակի այլ տանկերից համեմատաբար բարակ գրահ` հանուն թեթև քաշի և ավելի մեծ շարժունակության, ինչը համարվում էր մարտադաշտում գոյատևելու ավելի մեծ հնարավորություն: Նոր գրահի տեսակները բազմաշերտ էին և ներառում էին կերամիկա կամ այլ ոչ մետաղական նյութեր, ինչպես նաև պողպատ: Առաջինը հաջողությամբ մշակվել է Բրիտանիայում՝ Chobham armour անվամբ: Այդ տեսակի գրահը առաջին անգամ ընդունվել է 1970-ականների սկզբին M-1-ում և Leopard 2-ում:

Տանկերին տրամադրվող պաշտպանությունն անխուսափելիորեն մեծացրեց նրանց քաշը: 1950-1960 թթ. արտադրված որոշ տանկեր, ինչպիսիք էին S-54-ը և AMX-30-ը, կշռում էին ընդամենը 36 տոննա, բայց Chieftain-ն արդեն 54 տոննա էր: 1980-ականներին ներկայացված տանկերի մեծ մասը, ինչպիսիք են M-1 և Leopard 2-ը, նույնպես կշռում էին ավելի քան 50 տոննա, իսկ Challenger-ը կշռում էր մինչև 62 տոննա: Չնայած քաշի առաջադեմ անին, տանկերի արագությունն ու շարժունակությունը իրականում ավելացել են շարժիչների հզորության հաշվին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տանկերի շարժիչներն ունեին 500-800 ձիաուժ հզորություն:

2. Արդի մարտական գործողություններում տանկերի կիրառման խնդիրները:

44-օրյա պատերազմ

Հայկական տանկերը Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ կրելով ծանր կորուստ-

ներ մտածելու տեղիք են տվել առաջացնելով բանավեճ նրանց հետագա կիրառման կամ չկիրառման վերաբերյալ: Հայաստանի և Արցախի զինված ուժերը այս պատերազմի ընթացքում ըստ Oryx-ի տվյալների կորցրել են ավելի քան 255 տանկ, ինչը վերաբերվում է հնարավորություններին, ադրբեջանական ուժերը ունեին ռազմաօդային մեծ և հուսալի ուժեր, ներառյալ 36 հատ թուրքական բայրաքթար TB-2 ԱԹՄ-ներ (անօդաչու թռչող սարքեր) (ռազմական զինամթերք՝ Rokestan MAM-L լազերային ավելացմամբ), 48 միավոր իսրայելական Harop թռչող հրթիռներ, և նաև Orbiter 1K, Elbit Hermes 450 / 900, SjsStriker և Aerostar UA իսրայելական գերճշգրիտ զինամթերքների մեծ թվաքանակ [8, p. 10-11]: Ադրբեջանի BBC հրթիռային գույքը ներառում էր իր մեջ ժամանակակից LORA բալիստիկ հրթիռը (չորս սկզբնական մեկնարկներ և 50 հրթիռներ), հին խորհրդային SS-11-ներ և EXTRA իսրայելական կառավարվող հրթիռային կոմպլեքս (վեց սկզբնական մեկնարկներ և 50 հատ հրթիռ) [9]:

Լրացնելով սեփական ԱԹՄ և բալիստիկ հրթիռների պոտենցիալը՝ Ադրբեջանը նաև ներդնում է միջոցներ՝ հատուկ օպերացիաների նշանակալից ուժերի ստեղծման (ՀՕՈԲ) մեջ, որոնք զարգացրեցին ռազմական գործողությունները հակառակորդի թիկունքում՝ դեկավարման և կառավարման ցանցերի թիրախավորման և ոչնչացման համար, նաև կրիտիկական ենթակառուցվածքների և հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) ոչնչացման համար:

Տանկերի այսքան շատ կորուստները տեղի են ունեցել պատերազմի այն շրջանում երբ Ադրբեջանը պատերազմի առաջին իսկ ժամերին խոցեց հայկական ՀՕՊ համակարգերը, դրանով իսկ ձեռք բերելով օդային գերակայություն: Օդուժի լայն կիրառմամբ թիրախավորվեցին տանկերը, հրետանային համակարգերը, տեղաշարժեր իրականացնող բոլոր ռեզերվային ստորաբաժանումները, այս բանից հետո յուրային կողմը շատ քիչ էր կիրառում գրահատանկային ստորաբաժանումներ՝ մարտավարական խնդիրներ կատարելու համար, որն էլ ինչու չէ փոխեց մարտի ընթացքը:

Հոկտեմբերի 4-5-ը Պաշտպանական բանակի հարավային շրջանները ճեղքած՝ Ադրբեջանի զինված ուժերին հետ շարժելու և առաջնագիծը վերականգնելու նպատակով պլանավորվեց հոկտեմբերի 7-ին իրականացնել հակահարված: Այդ ուղղությամբ ստեղծվեց հակահարձակողական խմբավորում տանկային, մոտոհրաձրգային և հրաձգային գումարտակների կազմով, ոչ պակաս երկու բրիգադներով [2, էջ 52]:

Սակայն հաշվի չառնելով հակահարվածի անցնելու պայմանները՝ որոնցից և առավել կարևորն է՝ օդային գերակայությունը, ինչն էլ

պատճառ դարձավ գրահատեխնիկաների խոցմանն: Յուրային կողմը նույնիսկ չհասցրեց բացագատվել բնագծերի և առաջխաղացման երթուղիներում՝ խոցվեց աղբրեջանական անօդաչուների հարվածներից:

Սա արդեն գնալով ավելի էր դժվարեցնում յուրային ստորաբաժանումների հակահարձակումները՝ առաջացած ճեղքվածքները փակելու համար:

Տանկերի այսքան մեծ կորուստները վճարող նշանակություն ունեցան յուրային ստորաբաժանումների մարտական գործողությունների վրա: Պատերազմը ցույց տվեց, որ տանկերը հնացել են, ինչպես նաև ցույց տվեց, որ յուրային ՀՕՊ միջոցները բավարար չեն պաշտպանել տանկերն ու հրետանին՝ աղբրեջանի օդուժի հարվածներից:

Ռուս-ուկրաինական պատերազմը ցույց է տալիս, որ դեռ շուտ է տանկերը դուրս գրել սպառազինությունից իսկ որոշ դիտորդներ պնդել են, որ «մենք տեսնում ենք մարտավարական փոփոխությունների բուն բնույթը», և որ տանկերը «հնության են ենթարկվում» [7]: Այս պատերազմի մասին դեռ շատ բան կա որոնք դեռ մեզ հայտնի չեն բաց աղբյուրներից, և լավ հիմքեր կան մտածելու, որ պայմանները, որոնք նշանավորեցին դրա վաղ փուլերը, պարտադիր չեն, որ համապատասխան լինեն ապագա հակամարտություններին: Արդյունքում կոնկրետ գեներալի համակարգերը կարող են անարդյունավետ թվալ՝ ելնելով այն բանից, թե ինչպես և որտեղ են դրանք կիրառվել, պարտադիր չէ՝ իրենց բնորոշ թերությունների պատճառով:

Ռուս-ուկրաինական պատերազմում առկա տվյալները ցույց են տալիս, որ տանկերը դեռևս կարևոր նշանակություն ունեն ժամանակակից պատերազմում, և նրանց խոցելիությունը չափազանցված է: Ռուսաստանի տանկերի ծանր կորուստները (կատարված հաշվարկների ռուսական կողմը պատերազմի 1-ին ամսվա ընթացքում կորցրել է 994 տանկ, որոնցից 340-ը կամ 34 տոկոսը լքվել է անձնակազմի կողմից, իսկ մնացածը խոցվել է Ուկրաինական ստորաբաժանումների կողմից (այս տվյալները չի ներառում վնասված տանկերը)) [7] կարելի է բացատրել վատ պլանավորմամբ և նախապատրաստմամբ, հետևակի անբավարար աջակցությամբ և ուկրաինական հրետանու ու թեթև կամ կրոմի հակատանկային ժամանակակից միջոցների (Javelines, Stugna-P և այլն) օգտագործմամբ:

Ռուսաստանի սկզբնական գործողությունը գերադասում էր արագությունն ու գաղտնիությունը բոլոր մյուս գործոններից առաջ: Քանի որ նրանք ակնկալում էին փոքր դիմադրություն, թերագնահատելով հակառակորդին՝ ռուսական ուժերը շատ քիչ դեպքերում էին կարողանում

գործել համակցված բոլոր զինատեսակների փոխգործողությամբ, որը կպահանջի շատ լուրջ պլանավորում և համակարգում՝ օդային, ցամաքային, և ռազմածովային ուժերի միջև: Ռուսական ուժերը ուղղակի հարձակվեցին ուկրաինական ուժերի վրա՝ անպատրաստ վիճակում: Արդյունքում այս պատերազմի ընթացքը հնարավոր է լավ ցույց չտալ, թե որքան արդյունավետ կլինեն գրահատանկային և այլ ստորաբաժանումների փոխկապակցված գործողությունները:

Ելնելով վերոգրյալից կարելի է եզրահանգել որ խնդիրը տանկերը չէին այլ պարզապես դրանց վատ կիրառում և սխալ պլանավորելը, որոնք հանգեցրեցին նրանց մեծ կորուստների:

Ռուսական տանկերի կորուստները 3 (երեք) հիմնական խնդիր է բացատրում՝ դրանք են.

- անձնակազմի նախազգուշացման և նախապատրաստման բացակայությունը,
- վատ պլանավորումը, որը առաջացնում է նյութատեխնիկական ապահովման խնդիրներ,
- անբավարար հետևակը՝ տանկերին պաշտպանելու համար:

Տանկերը ամենաինտենսիվ սարքավորումներից են, որոնք պահանջում են՝ ընթացիկ սպասարկում, պահեստամասեր և զգալի վառելիք դրանք շահագործելու համար: Այս պահանջների պատճառով նյութատեխնիկական պլանավորումն ավելի կարևոր է տանկային ստորաբաժանումների համար քան գրեթե ցանկացած այլ զորատեսակի համար: Ռուսական կողմի անկազմակերպ ներխուժումը կամ հարձակումը Ուկրաինական ստորաբաժանումների վրա առաջացրել է նյութատեխնիկական մարտահրավերներ: Այսպես կոչված ռուսական «հատուկ ռազմական գործողությունները» նշանավորվեց մասնատման և գաղտնիության ծայրահեղ ջանքերով, երբ ստորաբաժանումների մեծ մասը ժամեր առաջ իմացան մարտական խնդիրները: Արդյունքում հրամանատարներին և նյութատեխնիկական անձնակազմներին տրվել են անբավարար նախազգուշացում պլանավորելու և պատրաստվելու համար:

Տանկային ստորաբաժանումները բավարար ժամանակ չեն ունեցել պատշաճ նախապատրաստվելու և համապատասխան սպասարկումներ իրականացնելու, կամ բավականաչափ պահեստամասեր ու ՎՋ նյութեր ձեռք բերելու համար, որոնք անհրաժեշտ են սովորական մարտական գործողություններ սկսելու համար:

Ավելին. Ռուսաստանի պլանը ներառում էր առաջխաղացման չափազանց շատ առանցքներ, և ցամաքային զորքերի ստորաբաժանումներին հանձնարարված էր առաջխաղացումը չափազանց արագ տեմպերով: Արդյունքում ռուսական ուժերը հանախ դուրս էին գալիս հրետանու, ռադիոէլեկտրոնային պայքարի և հակաօդային

պաշտպանության ծածկույթից, էլ ավելի խորացնելով նյութատեխնիկական ապահովման խնդիրները: Արագ առաջխաղացումը նշանակում էր նաև, որ Ռուսաստանն ուներ ավելի երկար և ավելի բաց մատակարարման գծեր, և նրա նյութատեխնիկական պատրաստ չէին տարածքային պաշտպանության ուժերի դարանակայներին: Չարմանալի չէ, որ տանկային ստորաբաժանումները համեմատաբար վատ էին գործում պատերազմի սկզբում, քանի որ ավելի մեծ նախապատրաստություն և պլանավորում են պահանջում, քան թեթև ստորաբաժանումները:

Ռուսաստանի տանկային ուժերի մեծ մասը կազմված է S-72 կամ S-90 տիպի տանկերից, որոնք զինված էին դիզելային շարժիչներով: Այնուամենայնիվ Ռուսաստանը դեռևս ունի մեծ թվով S-80 տարբերակներ, որոնք հաճախ հիմնված են ծայրահեղ ցուրտ շրջաններում, որտեղ նրանց զագատուրբինային շարժիչներն ավելի հեշտ են աշխատել, քան դիզելային շարժիչները: S-80 տանկերի ավելի մեծ տոկոս են թողել, քան S-72 կամ S-90 տարբերակները: Ռուսական կորցրած S-80-ՈԲ շարքի 85 տանկերից, ըստ Oryx-ի տվյալների 50-ը (59 տոկոսը) լքվել կամ գրավվել են: Կորցրած 34 S-80-Մ տանկերից 19 (59 տոկոսը) լքվել կամ գրավվել են [7]: Համեմատած S-72 և S-90 տանկերի հետ, S-80 տանկերն ունեն վառելիքի ավելի մեծ ծախս և օգտագործվում են այլ տեսակի (ավիոբենզին) վառելիք: Ռուսական տանկերի այդքան մեծ կորուստը ցույց է տալիս, որ վառելիքը վճարող գործոն է հանդիսացել դրանց լքման կամ գրավման համար: Տանկերի այդքան մեծ կորուստի պատճառը նաև այն է, որ ռուսական զինված ուժերի հարձակումը կամ ներխուժումը չի իրականացվել փոխգործակցված այլ զորատեսակների հետ ինչպես նաև հետևակի ոչ բավարար քանակի բացակայության պատճառով: Ըստ Oryx-ի տվյալների ռուսական տանկերի կորուստների կեսից ավելին տեղի է ունեցել պատերազմի առաջին 50 օրերի ընթացքում:

Տանկերի թույլ կողմերից մեկն այն է, որ նրանք հետևակային ուժերից պահանջում են պաշտպանել հակառակորդի հակատանկային հրթիռներից՝ հատկապես քաղաքային տեղանքում, որն էլ թույլ տվեց ՈԲկրահինական ուժերին հակատանկային խմբերով թիրախավորել ռուսական տանկերը և ունենալ հաջողություններ: Չնայած իրենց արդյունավետությանը, ժամանակակից հակատանկային կառավարվող հրթիռները ռուսական տանկերի հիմնական կործանողները չէին: Ըստ ուկրաինական ամենաբարձր աստիճան ռազմական խորհրդականի՝ հակատանկային հրթիռները դանդաղեցրել են ռուսական տանկերի առաջխաղացման ժամանակը,

բայց այն ինչ ոչնչացրել է նրանց՝ դա իրենց հրետանին է [7]:

Տանկերի մնայուն նշանակությունը:

Արցախի և Ուկրաինայի պատերազմները ցույց են տալիս, որ կրակային հզորությամբ շարժական այս տանկերը դեռևս կարևոր են, եթե դրանք կիրառվեն բոլոր գորատեսակների խիստ փոխգործողության (փոխկապակցված) պայմաններում՝ միմյանց աջակցմամբ, հակառակ դեպքում տանկերը և ցանկացած այլ սպառազինություն խոցելի կլինեն:

Ռուսական տանկային ստորաբաժանումները չունեին բավարար հետևակ, ինչը նրանց խոցելի էր դարձնում՝ Ուկրաինական հակատանկային ստորաբաժանումների կողմից, իսկ յուրային տանկերի կորուստը հիմնկանում պայմանավորված էր ՀՕՊ համակարգերի անհասանելի լինելով:

Ապագայի տանկեր:

Բազմաթիվ կարծիքներ կան այն մասին, թե ինչ պետք է լինի գրահաուժը, այսքան տարբեր տեսակների, հսկայական բազմազանության, արդի մարտահրավերների արդյունքում: Այս ամբողջ նյութի հիմնան վրա մենք պետք է փորձենք վերստեղծել ապագայում գրահատանկային ստորաբաժանումների զարգացման և սպասվող տանկերի պատկերը: Այնուամենայնիվ տանկերը 21-րդ դարի կեսերին կունենան շատ նոր հնարավորություններ: Տանկերի ապագայի մասին պատկերացում կազմելու համար պարզապես նայենք այսօրվա ավտոմեքենաներին: Քաղաքացիական մեքենաներն ու բեռնատարները զնալով ավելի թվային են դառնում, որոնց ծրագրավորումը մեքենայի անբաժանելի մասն են կազմում՝ զվարճանքից մինչև բախումներից խուսափելու համակարգեր: Դրանք կլինեն ավելի փոքր, թեթև, և ավելի շարժուն: Եթե համեմատականներ տանենք այսօրվա իրականության հետ ապագայում տանկերը կունենան հիբրիդային կամ էլեկտրական շարժիչներ:

Հագեցած կլինեն բազմաթիվ պաշտպանական համակարգերով՝ ընդունակ դիմակայելու ցանկացած անօդաչու հարվածային սարքերի և հակատանկային հրթիռների: Դրանք կլինեն նաև խիստ թվային և ավտոմատացված՝ ներառյալ արհեստական բանականության մեծ կախվածությունը:

Եվ որ, ամենակարևորն է մարտի դաշտում պետք է լինեն միասնական տեղեկատվական հարթությունում հետախուզության, խոցման եվ ապահովման միջոցների համագործակցությամբ (ըստ նշված ուրվագծի տարբերակի):

Սա չափազանց ծանր, պատասխանատու, ժամանակատար, ֆինանսական առումով թանկարժեք գործընթաց է, և մենք դրան պետք է ձգտենք մեր ուժերի ներածին չափով:

